ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի <<Անիպեմզայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի /40 դասաժամ՝ 2 մասնագետ/, Իմ հայրենիքը /2 դասաժամ/,Իմ հայրենիքը և աշխարհը /2 դասաժամ/, դասվարի /15 դասաժամ՝ I դասարան /, դասվարի /14 դասաժամ՝ IV դասարան/, հայոց լեզվի և գրականության /17 դասաժամ/, արվեստի /7 դասաժամ/, կերպարվեստի /2 դասաժամ/, տեխնոլոգիայի /8 դասաժամ/, երաժշտության /2 դասաժամ/,ֆիզկուլտուրայի /16 դասաժամ/, աշխարհագրության /8 դասաժամ/,պատմության /13 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար 3X4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,
- ինքնակենսագրություն /Ձև 5/,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև հոկտեմբերի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 10-ին՝ ժամը 14:00-ին, Շիրակի մարզի Անիպեմզայի միջնակարգ դպրոցում՝հասցեն՝ գ.Անիպեմզա, 1-ին փողոց, 1-ին նրբանցք,շենք 6:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /077/ 9 3 -30-65 հեռախոսահամարով: